«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

“Informational Committee” Informational NGO

ք. Երևան, Բաղրամյան 28, հեռ. +374 41 463 626, էլ հասցե՝ press@infocom.am
28 Baghramyan Ave, Yerevan, Armenia, mobile: +374 41 463 626, email: press@infocom.am

Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին
16/06/2026

Հարցում

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

«Ինֆոքոմ» լրատվամիջոցը հոդված է պատրաստում թանգարանների վերաբերյալ:

Խնդրում ենք տեղեկություն տրամադրել հետևյալի վերաբերյալ՝

1. Քանի՞ թանգարան (այդ թվում՝ տուն-թանգարան, պատկերասրահ) է ներկայումս գործում Լոռու մարզի տարածքում: Խնդրում ենք տրամադրել ամբողջական ցանկը՝ ըստ հասցեների և ենթակայության (պետական, համայնքային, մասնավոր):
2. Նշված թանգարաններից որո՞նք ունեն պետական (կամ համայնքային) կարգավիճակ և որո՞նք են մասնավոր սեփականություն կամ գործում են անհատների նախաձեռնությամբ:
3. 2021-2026 թ. հունիսի 16-ի վիճակագրությամբ՝ որքա՞ն է կազմել մարզի պետական/համայնքային թանգարանների այցելուների ընդհանուր թիվը (Խնդրում ենք տեղեկությունը տրամադրել ըստ թանգարանի և այցելուների թվի):
4. Նշված ժամանակահատվածում իրականացվե՞լ է արդյոք մարզի պետական և համայնքային թանգարանների շենքային պայմանների գնահատում: Եթե այո՝ խնդրում ենք տրամադրել՝

- գնահատման արդյունքները
- հիմնական խնդիրների ցանկը
- վերանորոգման կարիք ունեցող թանգարանները

5. Նույն ժամանակահատվածում որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել մարզային ենթակայության թանգարաններին պետական կամ համայնքային բյուջեից
6. Արդյո՞ք իրականացվել է թանգարանների ֆինանսավորման կառուցվածքի վերլուծություն (աշխատավարձեր, պահպանություն, ցուցադրություններ, վերանորոգում):
7. Արդյո՞ք գործում են թանգարանների զարգացման կամ այցելությունների խթանման պետական ծրագրեր: Եթե այո, ինչ ծրագրեր են և ինչ արդյունքներ են գրանցվել (այցելությունների աճ/նվազում, ծրագրերի արդյունավետություն):

ք. Երևան, Բաղրամյան 28, հեռ. +374 41 463 626, էլ հասցե՝ press@infocom.am
28 Baghramyan Ave, Yerevan, Armenia, mobile: +374 41 463 626, email: press@infocom.am

8. Իրականացվե՞լ է թանգարանների այցելությունների դինամիկայի և հանրային հասանելիության գնահատում (աճ, նվազում, սեզոնայնություն, հասանելիություն), և եթե այո՝ խնդրում ենք տրամադրել համապատասխան ուսումնասիրությունները:
9. Նախատեսվու՞մ է թանգարանների օպտիմալացում, միավորում կամ փակման գործընթաց: Եթե այո, երբ և որ թանգարանների մասով:
10. Կա՞ արդյոք որևէ գնահատում, թե որ թանգարանները առաջիկայում կարող են հայտնվել ռիսկային խմբում:
11. Թանգարաններից քանիսն ունեն կուրություն կամ խլություն ունեցող անձանց համար հարմարեցված լուծումներ (բրայլյան գրատիպով բացատրագրեր, աուդիոգիդեր, ժեստերի լեզվով թարգմանություն):
12. Արդյո՞ք մարզի թանգարաններում գործում է տոմսերի էլեկտրոնային վաճառքի համակարգ, և հնարավո՞ր է տոմսեր ձեռք բերել առցանց:
13. Արդյո՞ք թանգարանները ներառված են ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակված պաշտոնական տուրիստական երթուղիներում:
14. Լոռու մարզի տարածքում գործող պետական և համայնքային թանգարաններից, տուն-թանգարաններից ու պատկերասրահներից կոնկրետ քանիսն են ապահովված հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված թեքահարթակներով: Խնդրում ենք տրամադրել այդ թանգարանների հստակ ցանկը:
15. Այն թանգարաններում, որտեղ չկան թեքահարթակներ կամ շենքային պայմանները թույլ չեն տալիս ապահովել ֆիզիկական հասանելիություն, ի՞նչ քայլեր են ձեռնարկվում տվյալ պարագայում հաշմանդամություն ունեցող այցելուների ընդունելության և սպասարկման համար: Կա՞ արդյոք սահմանված հստակ ընթացակարգ կամ հրահանգ թանգարանի անձնակազմի համար՝ նման իրավիճակներում աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:
16. Արդյո՞ք ֆիզիկական հասանելիություն չունեցող թանգարաններում կիրառվում են այլընտրանքային/տեխնոլոգիական լուծումներ (օրինակ՝ 1-ին հարկում տեղադրված էկրաններով վիրտուալ շրջայցի հնարավորություն, QR կոդերով հասանելի նյութեր և այլն)՝ բովանդակությունը տվյալ այցելուներին հասանելի դարձնելու նպատակով:
17. Ե՞րբ է վերջին անգամ իրականացվել մարզի թանգարանների ցուցանմուշների ամբողջական գույքագրում և ստուգում: Վերջին 5 տարում արձանագրվե՞լ են արդյոք նմուշների կորստի, վնասման դեպքեր:
18. Մարզային ենթակայության թանգարաններում այցելությունների հոսքը խթանելու և հանրային հետաքրքրությունը մեծացնելու նպատակով՝ ի՞նչ կրթական, ճանաչողական կամ մշակութային ծրագրեր են իրականացվում (կամ ներդրվել վերջին շրջանում): Խնդրում եմ տրամադրել այդ ծրագրերի ցանկը և հակիրճ նկարագրությունը

«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

“Informational Committee” Informational NGO

ք. Երևան, Բաղրամյան 28, հեռ. +374 41 463 626, էլ հասցե՝ press@infocom.am
28 Baghramyan Ave, Yerevan, Armenia, mobile: +374 41 463 626, email: press@infocom.am

Խնդրում ենք հարցման պատասխանն ուղարկել annaslanian@gmail.com :

Հարգանքով՝

Լրագրող Աննա Ասլանյան / /